# 192

Է-լմ. 149

1. Կքալեի տրտմագին, հոգիս՝ ճնշված,
Բայց երջանիկ եմ հիմա մեջն Իր բազկաց,
Օրնիբուն զվարթ երգեր ցնծությամբ կերգեմ,
Զի երկնի Արքային հետ միշտ կքալեմ:

Մեծ Արքային հետ, ալելուիա՛,
Մեծ Արքային հետ, փա՛ռք Նորա,
Ալ չեմ թափառիր. տուն մը ունիմ վերին,
Քալեմ, խոսիմ հետն Արքային:

2. Տարիներով շղթայված էի մեղքով,
Չէր կրնար զիս սփոփել աշխարհս իրմով,
Բայց հիմա թռչունի պես ուրախ կերգեմ,
Զի Արքայիս հետ միշտ ազատ կքալեմ:

3. Ո՜վ Հոգի, որ հուսահատ կպայքարիս,
Ջանա Հիսուսն քո կյանքիդ մեջ ընդունիս,
Փրկության ցնծություն պիտ բերե քեզի,
Արքային հետ քալե դուն միշտ մեջն լույսի: